# ՔԱՋԱԼԵՐԵՔ ԻՆՔՆԵՐԴ ՁԵԶ

## ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ. 1 ԹԱԳ. 30:1-6

*1 Եւ երբոր Դավիթը եւ իր մարդիկ <u>երրորդ օրը</u> մտան Սիկելակ, ահա <u>Ամաղեկացիները</u> հարձակուել
էին հարավային երկրի ու Սիկելակի վրա. Եւ Սիկելակը զարկելով՝ նորան կրակով այրել էին. 2
Այնտեղի կանանց՝ փոքրից մինչև մեծը, գերի էին վերցրել. ոչ մի մարդ չէին սպանել, այլ տարել էին
իրենց հետ և գնացել իրենց ճանապարհով: 3 Երբ Դավիթն ու իր մարդիկ քաղաք հասան, այն
կրակով այրված էր, և իրենց կանայք, տղաներն ու աղջիկները գերի էին տարված:*

*4 Եւ Դավիթը եւ իր հետ եղող ժողովուրդն իրենց ձայները բարձրացրին եւ լաց եղան, մինչեւ որ
նորանց վրա ուժ չմնաց լալու:*

*5 Եւ Դավիթի երկու կանայք Հեզրայէլացի Աքինոամը եւ Կարմելացի աբաղի կինը՝ Աբիգեան էլ էր
գերի տարուած: 6 Եւ Դավիթը մեծ տագնապի մէջ էր, որովհետեւ ժողովուրդը նորան ուզում էր
քարկոծել, նորա համար որ բոլոր ժողովրդից ամեն մէկի սիրտը կսկծում էր իր տղաների ու
աղջիկների համար. **<u>Բայց Դավիթը ինքն իրեն զօրացրեց իր Տէր Աստուծով</u>:***

## I. ՎԻՇՏԸ ԴԱՎԹԻ ԱՌԱՋԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՆ ԷՐ:

*4 Եւ Դավիթը եւ իր հետ եղող ժողովուրդն իրենց ձայները բարձրացրին եւ լաց եղան, մինչեւ որ նորանց վրա ուժ չմնաց լալու:*

***Հուսահատության խայթը խորն է:***

*6 Եւ Դավիթը մեծ տագնապի մէջ էր, որովհետեւ **<u>ժողովուրդը նորան ուզում էր քարկոծել</u>**, նորա համար որ բոլոր ժողովրդից ամեն մէկի սիրտը կսկծում էր իր տղաների ու աղջիկների համար.*

*Հով. 14:1 – Ձեր սրտերը թող չխռովվեն. հավատացե՛ք Աստծուն, հավատացե՛ք նաև ինձ:*

- ***Ինչպե՞ս նա դուրս եկավ դրանից:***

## II. ԴԱՎԻԹՆ ԻՆՔՆ ԻՐԵՆ ՔԱՋԱԼԵՐԵՑ ՏԻՐՈՋ ՄԵՋ:

- *Կլինեն ժամանակներ, երբ մենք ստիպված կլինենք քաջալերել ինքներս մեզ:*

***1. Նա աղոթեց:***

*Դավիթն իրեն քաջալերեց Աստծուն ուղղված աղոթքի միջոցով:*

*Դավթի կյանքը աղոթքի կյանք էր:*

2. ***Նա փնտրեց Աստծո Ներկայությունը:***

*Ա Թագ. 30:7-8 – Եվ Դավիթը Աքիմելեքի որդի Աբիաթար քահանային ասաց. **«Եփուդը մոտեցրո՛ւ ինձ».** և Աբիաթարը եփուդը մոտեցրեց Դավթին: Եվ Դավիթը **Տիրոջը հարցրեց** ու ասաց. Հետապնդե՞մ արդյոք այդ գնդին, կհասնե՞մ նրանց: Եվ Տերը նրան ասաց. Հետապնդի՛ր և անպայման կհասնես ու կազատես բոլորին:*

- ***Այս պատմությունը հետաքրքիր ավարտ ունի. Աստված ամեն ինչ վերադարձնում է Դավթին:***

## III. ՄԵՐ ԱՍՏՎԱԾԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂ ԱՍՏՎԱԾ Է:

*Ա Թագ. 30:18-19 – **18** Եվ Դավիթն ազատեց ամենը, որ վերցրել էին ամաղեկացիները. Դավիթն իր երկու կանանց էլ ազատեց: **19** Եվ իրենց ոչ մի բանը չէր պակասել՝ փոքրից մինչև մեծը, թե՛ տղա, թե՛ աղջիկ և թե՛ ավար, ինչ որ նրանք առել ու տարել էին, Դավիթը բոլորն էլ ետ բերեց:*

*Խոսքն ասում է – **1** Եւ երբոր Դավիթը եւ իր մարդիկ <u>երրորդ օրը</u> մտան Սիկելակ...*

- ***Ըստ Աստծո Խոսքի՝ աշակերտները Հիսուսի խաչելությունից հետո կիրակի առավոտյան գնացին գերեզման, սակայն այն գտան դատարկ:***

***Հիսուսն ասաց.***

*Հով. 10:10 - Գողը գալիս է միայն գողանալու, և սպանելու և ոչնչացնելու համար,. ես եկա որ կեանք ունենան, եւ էլ ավելի ունենան:*

*Հայտնություն 21:4 – Եվ նրանց աչքերից պիտի սրբի ամեն արտասուք. այլևս մահ չի լինելու, չի լինելու նաև ո՛չ սուգ, ո՛չ աղաղակ, ո՛չ ցավ, որովհետև նախկիններն անցան:*

*Ա Կոր. 15:26-27 – Վերջին թշնամին, որ կխափանվի, մահն է, որովհետև Աստված ամեն բան հնազանդեցրեց նրա ոտքերի տակ (Սաղ. 8.6):*

*Ա Կոր. 15:55 – **55** Մահը հաղթության մեջ ընկղմվեց (Ես. 25.8): Ո՛վ մահ, ո՞ւր է քո խայթոցը, գերեզմա՛ն, ո՞ւր է քո հաղթությունը (հմմտ. Ովս. 13.14):*

## ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ